ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հուլիսի 2018 թվականի N 27

ՊԵՏՐՈՍ ՔԵՍԱԲԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 154-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի բնակիչ Պետրոս Քեսաբլյանի նկատմամբ կիրառել վարչական տուգանք՝ իր կողմից իրեն սեփականատիրության իրավունքով պատկանող համայնքի Լուի Դարթիժ դյու Ֆուրնեի փողոցի թիվ 76 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիրը՝ 04-069-0014-0072) բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում կատարվող ինքնակամ շինանարության իրականացման համար՝ նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:
2. Տուգանքի վճարումը իրականացնել սույն որոշումը խախտողին հանձնելուց ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ Մուսալեռ համայնքի բյուջե՝ 900325176296 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա.ՍԱՖԱՐՅԱՆ
2018 թվական, հուլիսի 25
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հուլիսի 2018 թվականի N 28

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու կողմից 2005 թվականի փետրվարի 22-ին հաստատված կանոնակարգը և հաշվի առնելով Մուսալեռ համայնքում 29.07.2018թ. կայացած գյուղատնտեսական նշանակության հողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները՝ որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում կայացած 0,0706 հա 04-069-0572-0002 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության (հողատեսքը՝ այլ) հողատեսքի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները:
2. Աճուրդում հաղթող ճանաչել Թեհմինե Ռազմիկի Աթոյանին և նրա հետ կնքել հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ա. ՍԱՖԱՐՅԱՆ
2018 թվական, հուլիսի 30
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«6» հուլիսի 2018 թվականի N 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արամայիս Սաֆարյանի դիմումը՝ կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակել Արամայիս Լյուդվիկի Սաֆարյանին՝ 2018 թվականի հուլիսի 12-ից՝ նրա հետ կնքելով անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին (Դոնարա Խաչատրյան) աշխատավարձի վճարումը իրականացնել համաձայն սահմանված դրույքաչափի:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, հուլիսի 6
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«6» հուլիսի 2018 թվականի N 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 164-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի N1384-Ն որոշմամբ՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավար Էդգար Հովհաննիսյանին հատկացնել իրեն հասանելիք 2018 թվականի ամենամյա հերթական արձակուրդը՝ հուլիսի 12-ից՝ 20 աշխատանքային և 4 լրացուցիչ օր տևողությամբ:
2. Պարտականությունները դնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի տեղակալ Արամայիս Սաֆարյանի վրա:
3. Էդգար Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2018 թվականի օգոստոսի 15-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԚԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, հուլիսի 6
գ. Մուսալեռ